ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-21-10/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «26» Ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեսթ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Գյուլասարյանի, ով գործում է «Բեսթ Մոթորս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.02.2021թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-21-10/2-2** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայությունների** (այսուհետ՝ Ծառայություն) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան Ծառայություն՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության **առավելագույն** գինը կազմում է **10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված ծառայությունների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Բեսթ Մոթորս» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Գյուրջյան 15/14
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Ավան մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163718006618
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01021205
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
...ԱՀԱԿՅԱՆ	Ս. ԳՅՈՒԼԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀՇՁԲ-21-10/2-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/հ	CPV կոդ	Անվանումը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման ժամկետը
1	50531220/501	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	Դրամ	10 000 000	ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա՝ 2-4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.

• Տրանսֆորմատորների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին:

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-21-10/2-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/հ	CPV կոդ	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	50531220/501	Փոխակերպիչների վերանորոգման և պահպանման ծառայություններ	3 000 000	6 000 000	10 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

ԿԱՏԱՐՈՂ

«Բեսթ Մոթորս» ՍՊԸ-ի տնօրեն

«ԲԵՍԹ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
"БЕСТ МОТОРС"
"BEST MOTORS"
01021205

ԴԱՎԻԹ ԳՈՒԼԱՍԱՐՅԱՆ